

(ինչպէս այն ատեն կ'ըսէին) հողը
աւելի հեշտ և մեղմ կ'ըլլայ իր ոսկե-
րաց վրայ :

Վոր համար բարի քաղաքացինեւ-
րը իրենց ծննդական երկրին հետ սի-
րով կը միանան : “Թագաւորին առջե-
ւըն էի , կ'ըսէր ՚Նէմի , և բաժակ կը
մատուցանէի անոր , և ես տրոտում
կ'երեւէի անոր աշացը . թագաւորը
ինձի ըսաւ . ինչու քու երեսդ տիսուր
է , քանի որ հիւանդ ալ չես . և ես ը-
սի թագաւորին . Ինչպէս կարելի է որ
տիսրադէմ չըլլամ , մինչդեռ իմ հար-
ցը գերեզմանի քաղաքը անապատ
դարձած է , և անոր դռները այրը-
ւած . եթէ կ'ուզես շնորհք մը ընել
ինձի , զրկէ զիս Յուղայի երկիրը ,
ուր է հօրս գերեզմանը , և ես զայն
վերստին շնեմո :

Նէմի Յուղայի երկիրը հասնելով
կանչեց իր քաղաքակիցները , որ հասա-
րակաց հայրենեաց սիրով միացեալ
էին և ըսաւ . “ Դուք գիտէք մեր վիշտը .
Երուսաղէմը անապատ դարձած է , և
անոր դռները հրձիգ եղած . եկէ միա-
նանք և զանի վերստին կանգնենք . ”
“ Իսանի որ Հրէաները օտար երկիրնե-
րու մէջ բնակեցան , այնչափ հեռի
իրենց Հայրենիքէն , չը դադրեցան
դառն արտասունքներ թափելէ , որով
կըստուարացնէին կարծես թէ Շա-
բելնի գետերը յիշատակաւ . Ախօնի .
Զէին համարձակեր երգել օտար եր-
կրի մէջ իրենց քաղցրանուագ երգե-
լը , որ Տիրոջը օրհնութիւններն էին :
Երենց նուագարանները , որ երբեմն
միսիթարութիւն եւ ուրախութիւն
էին , գետին եղեցքը արնկուած ու-
ռիներէն առ կախ կը կենացին , և
նուագելու արուեստն ալ մոռցեր
էին . “ Ով Երուսաղէմ , կ'ըսէին ,
թող զիս մոռնամ , եթէ երբէք զքել
մոռնամ , ” Անոնք , զրս յաղթոռները

իրենց հայրենեաց հողին վրայ թողած
էին , աւելի երջանիկ կը համարէին իւ-
րենց անձը այն Վաղմաններով , զորս
գերութեան միջոցին կը նուագէին .
“ Ով ժամանակ է , ով Տէր , որ ողոր-
միս Ախօնի : ” Քու ծառաներդ կը
սիրեն անոր աւերակներն ու քանդեալ
քարերն անգամ , և իրենց ծննդեան
երկիրը՝ թէպէտ և տառապէալ , կը
գրաւէ տակաւին իրենց սէրը և գո-
րսվանքը :

ՊՕՍՈՒԵ

ՀԱՄԱԲՈՅՈՍ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պօլէ . Աւ Ա . Ա . — Չեր նամա-
կաւ կը ծանուցանէք Ո՛չեցի Ախօնիթար
վարդապէտի գալուստն ՚ի Պօլիս և կը
յաւելուք թէ՝ աւելի լաւ չէր լինիր ,
որ Ախօն յիշեալ վարդապէտի Երու-
սաղէմէն ենելու պարագաները մի
առ մի հրատարակէր , որպէս զի տա-
րակարծիք տարածայնութեանց տեղի
շրմար :

Իրաւունք ունիք , Ո՛եծարգոյ բարե-
կամ , բայց ովլ կը մօտածէր՝ թէ Ո՛խի-
թար , իւր անխոհեմ վարմունքով վե-
րաստին տեղի պիտի տայ տարածայ-
նութեանց : Ախօնիթար վարդապէտն ,
մօտ տարի ու կէս ժամանակ վանու-
ցը մէջ մնալով , շարունակ կը թաւ-
խանձէր՝ թէ զՊատրիարք Հայրն և
թէ զայլս , որպէս զի միջնորդէն առ
Ա . Պատրիարքն Ա . Պօլսոյ ներողու-
թեամբ զինքն ՚ի Տարօն գարձնելու :
Դիմաւորապէս կ'առարկէր նա՝ թէ
ինքն տոկոսով տուած դրամներ և հո-
ղագործական եկամուտներ ունի Տա-

րոնց վիճակին մէջ, որոնք իւր բացակայութեան պատճառաւ անհաւաք մնալով ինքն կը վնասի նիւթապէս, ուստի և կը խնդրէր կերպով մի գէթ ԱԿարպայեցւոց վանքն դառնալ, որ իւր աքսորանաց համար առաջին անգամ որոշուած տեղին էր) և կը սէր թէ՝ այն տեղին դիւրին է իւր նիւթական վնասուց առաջն առնուլ. ըստ որում յիշեալ վանքն կից է Աշոյ վիճակին, Այս խնդրանաց հիմն վրայ Ա. Աթոռոյս Արքաղան Կախագահն միջնորդած էր առ Ա. Պատրիարքն Ա. Պօլսոյ և նա իւր բնատուր ներողաւ մտութեամբ հաճութիւն տուած էր ԱԿարպայեցւոց վանքը երթալու համար, ուր եթէ առաջին անգամ համբերելով մնացած լինէր Ախիթար վարդապէտն, բնաւ երբէք տեղի պիտի չունենային այն անախորժ վրդովմունքներն, որոնք երկու տարի առաջ յուղեցան Պօլսոյ մէջ իւր անխոհեմութեան առթիւ, և աւելի ծանրացուցին խնդիրը, քան թէ օգուտ գործեցին իւր անձին :

Արդ, Անձարդոյ Բարեկամ, ԱՀ Խիթար վարդապէտն, իւր բաղմազերա թախանձանքներով և միջնորդութեամբ Ա. Աթոռոյս Պատրիարք Հօր, հաճութիւն ստացաւ ուղղակի ԱԿարպայեցւոց վանքը երթալու, և այս մասին յատուկ վկայագիր եւս տրուեցաւ իրեն. Ավ կը կարծէր, թէ յիշեալ վարդապէտի թախանձանքները լոկ պատրուակներ էին երկու Արքաղան Պատրիարքաց բարեմը տութիւնը և ներողամութիւնը պատրելու համար : Ախիթար վարդապէտըն, երբ Անպ. 21 ին ձանապարհ ելաւ Ա. Աթոռէս, ամեն մարդ այն պէս գիտէր և այնպէս համողուած էր, թէ ուղղակի ԱԿարպայեցւոց վանքը պիտի երթայ, և մինչեւ ան-

գամ Աշեցի անտերունը պատանեակ մի եւս յանձնուեցաւ իրեն, որ տանի իւր ազգականներուն յանձնէ . սակայն յիշեալ վարդապէտն այժմ Պօլս եկած է : Ավ է յանցաւորն, եթէ ոչ զարձեալ ինքն, որ իրեն համար եղած բարերարութիւնն անգամ իւր երազական և պատիր դիտաւորութեանց կը զոհէ :

— Առ Կ. Ե. — ՍԻՕՆ նախորդ Թըւով հրատարակուած «Առ Երաղյաց Աշլաւայ» յօդուածը կարդալով բարեհաճած էք Զեր պատուական գրութիւնը առ մեզ ուղղել, որով կը յորդորէք խաղաղասիրական ոգւով վարիլ Եղիպտական խնդրոյն մէջ և ըսլիրաւորելքնաւ Անձ. Յակոբեան եղարցանձնասիրութիւնը, որոց բարեկամութենէն աւելի կարող է շահիլ Ա. Աթոռը, քան թէ հակառակութենէն :

Աներէք մեղ՝ պատասխանել Զեր որ Ա. Աւխոտիս Ախիթանութիւնը ատելով կ'ատէ հակառակասիրութիւնը, և Եղիպտական խնդրոյ ծագման առաջն օրէն ՚ի վեր ջանացած է ամեն խաղաղասիրական միջոց ձեռք առնուլ և իրաւախոհութեամբ վերջ տալ նոյն խնդրոյն, բայց, գմբաղդաբար, ցարդ հասած չէ իւր նպատակին վերջնական կերպիւ : Բաջայացտէ Զեր, որ մի տարիէն աւելի է, որ ՍԻՕՆ երկու տող գրուած անգամ հըրատարած չէ Եղիպտական խնդրոյն նկատմամբ, յուսալով թէ՝ կիրքերը կը հանդարտին և ամեն գործ խաղաղութեամբ եւ իրաւախոհութեամբ կ'աւարտի : Բայց այն ևս գիտէք անշուշտ, թէ Աշլաւայ քանի քանի անգամ, ուղղակի և անուղղակի կերպով, յարձակած է համօրէն Ախիթանութեանս դէմ, ջանալով միշտ զրպարտել և վատահամբաւել իրեւ յառաջարդինութիւնն արգելվէ, իրեւ առաջ-

Նորդութեան լիւհանցող, իբրեւ անգուլ, և այլն և այլն:

Աւտի եթէ ՄԻՕՆ պարտաւորեցաւ Եղիպտական խնդրոյն վրայ խօսիլ, ոչ թէ Հյակոբեանց սիրտը վիրաւորելու և հակառակութիւն արծարծելու համար էր, քաւ լիցի, այլ յատիկապէս Վրշալուց լեզուագտարութիւնը սահմանական համար, որտէս զի լրհամարձակի կարծել թէ Միաբանութիւնա փաստ և կարողութիւն չունի իւր երազական գիտողութիւնքը ջրել եւ հելքել: Եթէ Եգիպտական խնդրոյն խորը թափանցենք, ակներեւ կը տեսնենք, որ նոյն խնդրոյն տարապայման երկարելոյն և հակառակութեան են թարկուելոյն պատճառ գլխաւորապէս Վրշալու եղած է, իւր յարձակողական անընդհատ և անփաստ հրատարակութեամբք, Մի թէ չէք նրամարեր, թէ նոյն խոկ Մեսրոպ եպիսկոպոսի խնդրոյն նկատմամբ, Բնչքան անհամբեր է Վրշալու, անհամբեր իւրեւ շահանջն խռիւտհիւս. Բնչպէս կը յուզի, կը բօրբոքի եւ Վզգային Վարչութեան կողմէն տակաւին որոշում մի չեղած, ինքն շարունակ կը քոնքարտայ, կը սպառնայ և դիտողութիւններ կը հրատարակէ, մերթ Եգիպտահայոց վիճակին կարեկից ձեւանալով, մերթ Մեսրոպ եպիսկոպոսը ներբողական բառերու կոյսին տակ սրողելով, մերթ Վզգային Վարչութեան կողմէն առաջարկութեան մասնաւորապէս առ Զեղ միայն ուղղել:

Թեանը խրամներ տալով, մերթ Վատուածատութ վարդապետը դառագարտելով, և այլն և այլն:

Ի՞նչ է Վրշալուայ այս տակնապը և անհամիգստութիւնը, եթէ ոչ անխոհեմընթացք մի, որով փափաքելով աւելի հաւատարիմ ծառ այսութիւն մուտքացանել Մէծ Հյակոբեանց և Մեսրոպ եպիսկոպոսին, աւելի կ'աղջարտէ նոցա անունը և պատիւը: Թողլ լու Վրշալու, իսկ ՄԻՕՆ, արդէն շուրջ մի տարի է, որ լուութիւն կը յարգէ:

Ի վերջ բանիս, կը հաւատացրնեմք Զեղ, որ ինչպէս Դուք և Զեղ հետ շատերը, նոյնպէս և յաւէտ Ոյաբանութիւնս, ոչ միայն սիրոյ և խաղաղութեան կը փափաքի, այլ և իրեն նուրիական պարտք կը ձևնաց այլօց եւս քարոզել և ուստքանեն: Մակայն գիտէք արդեօք, որ խաղաղութիւնը արդարութեան ծնունդն է, և առաջնոյն թագաւորութիւնը՝ երկրորդին վրայ կը հաստատուի, թողլ յարգուի և սիրուի արդարութիւնը, և ահա խաղաղութիւնն կը թագաւորէ ինքնին:

Յուսաւով որ, թէ Դուք և թէ Զեղ հետ ամեն խաղաղութեան փափաքողներ կը համոզուիք մեր համառօտ պատասխանագրութենէն, բարեօք համարեցինք տպագրութեամբ հրատարակել, բան թէ մասնաւորապէս առ Զեղ միայն ուղղել: